№ 34 ՇԱԲԱԹ, 13 ՓԵՏՐՈՒԱՐԻ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
Տարեկան . . . 10 ռուբ.
Կէս տարին . . . 6 ռուբ.
Ամսական . . . 1 ռուբ.
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ
Տարեկան . . . 12 ռուբ.
Կէս տարին . . . 7 ռուբ.

Բաժանորդագրութիւնը ընդունւում է իւրաքանչիւր ամսի սկզբից, և պիտի վերջանայ անպատճառ յետագայ որևէ ամսի վերջին.
Փետրուարի մեկից մինչեւ տարւայ վերջը արժէ 10 ռուբլի.
ԱԳԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐ. և ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹ. ՉԷ ԸՆԴՈՒՆՒՈՒՄ
Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 20 ԿՈՊԷԿ (կարելի է և դրոշմանիշով) և հին հասցէն, առանց որի գիմումները կը մնան ԱՆՀԵՏԵՒԱՆՔ.

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ 1916 ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀՈՐԻԶՈՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

ՇԱԲԱԹ, 13 ՓԵՏՐՈՒԱՐԻ № 34

ԱՌԱՆՁԻՆ Ժ-Ը ԱՄԷՆ ՏԵՂ 6 ԿՈՊ.
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԸՆԴՈՒՆՒՈՒՄ ԵՆ ԱՄԷՆ ԼԵԶՈՒՈՎ.—1-ին երեսի վրայ տող՝ (պետիտ) 10 կոպ., կոնտորից դուրս՝ 20 կոպ., 4-րդ երես 5 կոպ., կոնտորից դուրս՝ 10 կոպ.
ԱԳԱՌԻԿ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՉԵՆ ԸՆԴՈՒՆՒՈՒՄ
Խմբագրութիւնը բաց է 9—5 ժամ., գրասենեակը 9—2 ժ. ցերեկ. և 6—8 ժ. երեկ.
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԽՄԲԱԳՐԻ ՄՕՏ՝ ժ. 2-ից մինչ 3-ը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція Газеты „Оризонъ". Соловакская ул., № 6, кв. 1, Телеф. № 15—57.
Pour Tiflis (Russie, Caucase), Redaction „Horizon".

ՕՐՈՒԱՅ ԿԱՐԵՒՈՐ ԱՆՑՔԵՐԸ

Ռուսաց արեւմտեան ճակատում տեղի են ունենում առանձին ընդհարումներ։

Կովկասեան ճակատում ռուսները շարունակում են աջողութիւամբ ներգել թշնամուն։

Բոսֆորի մօտ ռուսաց սուզանաւը խորտակել է քարածուխով բեռնւած մի սուզանաւ։

Կրոնպրինցը ժարտին մտադիր է այցելել Սոֆիա և Պոլիս։

Բալկաններում գարնան առաջին իսկ օրերից անգլոֆրանսիացիները յարձակման են դիմելու։

Արեւմտեան ռազմաբեմում շարունակւում է խոշոր ճակատամարտը Վերդիւնի շրջանում։

Ներսիսեան Հայոց Հոգևոր Դպրոցի Հոգաբարձութիւնը յայտնում է ի գիտութիւն, որ փետրուարի 14-ին Վանից Մայր եկեղեցում ս. պատարագից յետոյ կատարւելու է դպրոցիս հիմնադիր երջանկայիշատակ

ՆԵՐՍԷՍ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

164 Հոգեհանգստեան կարգը։ 2—1

Կիրակի, փետրուարի 14-ին

ՍԱՐԳԻՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ՆՈՒՆՈՒՓԱՐԵԱՆԻ

մահւան քառասունօրեակին Թանդոյեան ս. Աստուածածնի եկեղեցում (Միքայէլեան փող.) կը մատուցւի պատարագ և կը կատարւի հոգեհանգիստ։ Պատարագի սկիզբը առաւօտ. ժամը 11-ին, իսկ հոգեհանգիստը ցեր. ժամը 12 և կէսին։ Որի մասին յայտնում են ազգականներին ու ծանօթներին հանգուցեալի այրին՝ Նատալիա Ծովճաննիսեան Նունուֆարեանը զաւակների հետ միասին։

166 1—1

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ

Երկուշաբթի, փետրուարի 15-ին

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ

ԲԱՐԵՀԱՃ ՌԵԺԻՍՍՈՐՈՒԹԵԱՄԲ ՌՈՒՍԱՑ ԴՐԱՄԱՏԻԿ ԽՄԲԻ ԳԼԽԱՒՈՐ ՌԵԺԻՍՍՈՐ

Ա. Ա. ՏՈՒԻԳԱՆՈՎԻ

ԻՍ. ԱԼԻԽԱՆԵԱՆԻ ԲԵՆԵՖԻՍԻՆ

Կը ներկայացնէ Հայոց Դրամատիկ ընկերութեան ժիւրիի մրցանակին արժանացած Ա. ՏՈԼՍՏՈՅԻ յայտնի ողբերգութիւնը

ՖԵՕԴՈՐ ԻՕԱՆՆՈՎԻՉ ԱՐՔԱՆ

7 պատկերով, թարգմ. Տ. Ցովհաննիսեանի

ՖԵՕԴՈՐ ԱՐՔԱՅԻ ԴԵՐԸ ԿԸ ԿԱՏԱՐԷ ԻՍ. ԱԼԻԽԱՆԵԱՆԸ

Մասնակցում են—տ. տ. Աշխէն, Զարէլ, Ժասմին, Մանուչարեան, Մարգարիտ, Սիրանոյշ, Սեւումեան, պ. պ. Աբէլեան, Ազեան, Ալիխանեան, Աւետեան, Բերոյեան, Գրիգորեան, Յուզանեան, Մամիկոնեան, Մանուէլեան, Միրազեան, Միրզոյեան, Մկրտչեան, Սուրաթեան, Սեւումեան և ուր.

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ Է ԵՐԳԵՑԻԿ ԽՈՒՄԲԸ


Սկիզբը ճիշտ ժամը 8-ին երեկոյեան ✦ Տեղերի գները բենեֆիսային են

Տոմսակները այժմեանից ծախւում են թատրոնի կասսայում

Կասսան բաց է ամենայն օր, ժամը 10-ից մինչև 2-ը, երեկոյեան 6-ից 8-ը։

Վարչութեան հերթապահ անդամներ՝ Խ. Աֆրիկեան և Ս. Գալստեան

899 3—2



ԶՈՒԲԱԼՈՎԻ ԱՆՈՒԱՆ

Ժողովրդական տուն

Շաբաթ, փետր. 13-ին

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄԱՏ. ԽՄԲԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Կը ներկայացնէ

Առաջին անգամ ժողովրդական տան բեմի վրայ հայ տարազով և գիւղական կեանքից, նոր բեմադրութեամբ

ԾԻԼԵՐ

դրամա 5 գործ., հեղ. Յ. Մալխասեանի

Մասնակցում են—օր.օր. Արփենի, Գրիգորեան, Վանեցեան, տ.տ. Մելիք-Ահնազարեան, Միրաքեան, Ցասմիկ, պ.պ. Արամ, Գալստեան, Գուրգէն, Գասպարեան, Եղոյեան, Եանիկեան, Լամբրեան, Մարութեան, Միքայէլեան, Յարութիւնեան I, Յարութիւնեան II, Ստեփանեան, Սերժ, Օհանեան և ուրիշ.։

Սկիզբն է 8 ժ. երեկ.

Ռեժիսսոր՝ Ամօ-Խարազեան

Տեղերի գները գինւորական տուրքերի հետ միասին 10-ից մինչև 60 կոպ.։

Վարչութեան հերթապահ անդամներ՝ Արովեան և Ամիրաղեան

35 1—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Շաբաթ, փետրուարի 13-ին

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹ.

Կը ներկայացնէ

ԹԱԳԱՒՈՐ

Պիէս 3 ար., Ռիշպինի, թարգ. Ց. Ցովհաննիսեանի

Սկիզբը ճիշտ 8 ժ. երեկ.

Ռեժիսսոր Սեւումեան

Տոմսակները 60 կ.-ից մինչև 1 ռ. 30 կ.

Հիւրերը վճարում են անդամների երաշխաւորութեամբ ակումբի մուտքի համար տրամադրելի 50-ակ., իսկ կանայք և ուսանողները 25-ական կոպ.։

163 1—1

Վանեցի Մանուէլ (Սաքօ) 26 տարեկան, հօր անունը Բաղդասար Շուշանցեան ապրում էր Հարաւային Ամերիկա, Արգենտինա հասարակապետութիւն, պրովինցիա de tacuma։ Տարի և կէս է տեղեկութիւն չունիմ, խնդրում եմ հայրենակիցներէն իմացնել ինձ հետևեալ հասցէով. Russia. Россія. Игдырь, Эриван. губ. Аликамарлу, Благотворительному Обществу Բաղդասարին (վանեցի)

161 2—2

Կինօ- „ԼԻՐԱ" Թատրոն

11, 12, 13 և 14 փետրուարի

Ցուցադրւում է հսկայական սենսացիօն ծրագիր, առաջին մենաշնորհւած էկրան

„ԻՇԽԱՆ ՄԱՏՎԷԻ ԿԱՅԱՆԸ"

Ցնցող կինօ-դրամա 5 մեծ գործողութեամբ

Ոսկէ սերիա ըստ ՍԵՐԳ. ԱՌՈՒՍԼԻՆԴԵՐԻ պատմւածքի.

I մաս—Առաջին հանդիպումն.
II մ.—Վայրի խրախճանք.
III մ.—Իշխ. Մատվէի ցանցերում.
IV մ.—Օրհասական կայանը.
V մ.—Խեղագարութիւն.

Իշխ. Մատվէյ, Նեզլոբինի թատր. դերաս.	Ա. Զարգովին
Լեզաննա Բորիկ . . .	Բ. Ռուստկովսկայա
Իշխանուհի Աննա . . .	Լ. Ռընդինա
Սպայ Նեվողով . . .	Ա. Բեստուժեւ

Ազդ. Ամենամօտիկ ժամանակում կը ցուցադրւի դրամա ըստ Մաքսիմ Գորկու պատմւածքի «Ֆոմա Գորդէեւ» ուժեղ դրամա, 4 գ.

582 0—125

ԲԵՐԼԻՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Գ.

ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւնը, առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի, բժշկութիւն նաև ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ. Թոքախտի, սրտի և ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորւած ՇԱՆԹԱՅԻՆ ՌԵՆՏԳԵՆԻ ճառագայթներով։ Ամեն օր 9—1 և 5—7 ժ., կիրակի օրերը 9—12-ը։ Բեհբուտովսկայա № 23, հեռ. 7—94։

123 . 25—11

ԲԺԻՇԿ

Ց. Մելիք-Նուբարեան

Ընդունում է ՆԵՐՔԻՆ և ԵՐԵԽԱՅՈՑ հիւանդ. ժառանգիտ. թոքախտ, թոքերի և սրտի հիւանդութիւններ։

Ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, երեկոյեան 5—7 ժամը։ Սոլոլակ, Սերգէեւսկայա փող. № 1.

46 Հեռախօս 16—69. 20—20

ԲԺԻՇԿ

Բ. Գ. ՆԱՐԻՄԱՆՈՎ

Վեներական, կաշւի, սիֆիլիս և նյարդ հիւանդութիւններ։ Բուժումն «606» և «914» պրեպարատներով։ Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր երեկ. ժ. 5½-ից մինչև 8-ը։ Միքայէլեան փող., № 33։

38 Հեռախօս 16-17. 100—29

Թիֆլիսի ակնաբուժարանի աւագ օրդինատոր բժշկուհի

ՍՈՖԻԱ ՄԻՐԶՈՅԵԱՆ

Ընդունում է ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ ունեցողներին ամեն օր 1½—3 ժամը։ Սերգէեւսկ. փող. № 1, հեռախօս 16—67

932 50—14

ՏՊԱՐԱՆ

„ՄԱՄՈՒԼ"

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՏՊԱՐԱՆԱԿԱՆ ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ

Օտար լեզուներից պատւէրներ կատարւում են կանխավճար ստանալուց յետոյ։

Тифлисъ, Типографія „Мамулъ", Лорисъ-Меликовская, 22.

ՎԱՐԱԳՈՅՐԻՆ ԵՏԵՒԸ...

(Թռուցիկ նօթեր)

Լուրը հնչեց ի Հայաստան
Մեծաց Հայոց Բարձր աշխարհէն,
Թնդաց բոլոր սիրտ հայկական,
Հայն արթնցաւ իր խոր քունէն,
Կարնոյ զաւակ զգաց յայտնի,
Թէ փրկութիւն զօրով լինի...

Մեր յեղափոխութեան առաջին շրջանի ռազմերգներէն այս տողերը մարիս եկան, երբ հեռագիրները մին միւսի ետևէն աւետեցին Կարնոյ, «Մեծաց Հայոց»—Բարձր Հայք նահանգի կեդրոնի անկումը։

Հայ յեղափոխական գաղափարի բողբոջման առաջին օրրանն է Կարինը Վանէն յետոյ, որը այնքան յոյսերու և ոգեւորիչ խանդավառութիւններու եւ սնուցիչ մայրը եւ միանգամայն սեւազգեստ գերեզմանափորն է եղած... Ահա թէ ինչու այսօր այնքան մայլ և մորմոքալի յոյզեր կը զարթեցնէ ան մեր սրտերուն խորը։

Կարինը 80-ական թւականներուն.

Երիտասարդութիւնը ոտքի վրայ է, կազմւած է «Պաշտպան Հայրենեաց» գաղտնի ընկերութիւնը, կապեր հաստատւած են Կովկասի յեղափոխական խմբակցութիւններու հետ, զէնքեր և յեղափոխաշունչ բրոշիւրներ կը տեղափոխեն, գպրոցներ կը բացւին Օվաչի գիւղերուն մէջ. գործի գլուխ անցած են Նշիկեան եղբայրներ, Բարսեղ-Ղարամելիք, Տօնական եայլն. կըսկսէ հալածանք, ձերբակալութիւն. առաջին անգամն է, որ հայ յեղափոխականը կը ժանէ Թրքական բանտը։

Կարինը 90-ական թւականներուն.

«Մի ձայն հնչեց Էրզրումից», «Կարին և Պոլիս որոտման նման» կը պայթին. Գում-Գափուի ցոյցին կարձագանքէ Կարնոյ երիտասարդութիւնը. ոստիկանութիւնը եկեղեցին խուզարկած ատենը ընդդիմութեան կը հանդիպի... դիակներ կը փռւին։

Ահա և Կարինը 95-ին։

Ու թուղթ է պատեր ամենուրեք հայ երկնակամարին. 5000 դիակ մի քանի ժամւայ մէջ, Վէմեան քահանայի և Կ. Կոբեանեանի հերոսական ինքնապաշտպանութեան յարակից։ Չի մեռնիր սակայն ազատագրական տենչը. նորէն կազմակերպութիւն, նորէն գաղտնի ժողովներ։ 99-ին կը կախւի հայ յեղափոխական պանծալի դէմքերէն մինը—Թոթուլը, յեղափոխական սերունդը աւելի կը կծկւի, աւելի կը սահմանափակւի, բայց այդ սահմանափակումի մէջ միշտ կը խորունկնայ և կըծգլայնի աւելի բովանդակալից դառնալով։

Այդ ամենի մէջ իր ժամանակութեան լայն բաժին ունի Սանասարեանի սանեղծած սերունդը։ Կարնոյ Սանասարեանը խոշոր դեր է կատարած իր երեքտասնեակ տարիներու գոյութեան ընթացքին, մեր տաճկահայ իրականութեան մէջ, տուած է բազմաթիւ ուսուցիչներ, հասարակական գործիչներ, խմբագիրներ, գրագէտներ և այլն, որոնցմէ յիշենք Առանձար, Նշանիկ Յովհաննէսեան, բանաստեղ Պարսամեան, Ճէմիլ, Բազմայեան, Թաշճեան, Աւետիս Պէյլերեան, տօք. Հայրապետեան, Հապէշեան, Պոլոեան, Տ. Ցարութիւնեան, Շահմուրատեան, Թորամեան և այլն, և այլն։

Այդ դպրոցը Կարնոյ փառքն էր եղած և տարիները այնպէս մը հիւսած էին իրարու այդ երկու անունները, որ մէկն առանց միւսի անըմբռնելի էր։

Բայց տեսնենք հիմա Կարինը 908-էն յետոյ։

Վարդագոյն յոյսերու, գգլխիչ երազներու անմոռանալի օրեր... Կովկասէն վտարանդի՝ հոն է առած իր շունչը տարաբախտ Սեւանը (Թոփչեան), հոն հասած է նաև մեր անմահ Սարգիսը, եռուզեռ, իրարանցում, ճառեր, միտինգներ. կը կազմւի «Կարնոյ Երիտասարդական Միութիւնը». հիմը կը դրւի միօրեայ թերթի մը—«Յառաջ», որ առաջինը կըլլայ սահմանադրական այդ շրջանին՝ համիտեան ռէժիմին խեղդւած զաւառի ձայնը հընչեցնող. ինչ յոյսեր կարթնցնէր այդ թերթի ընթերցումը զաւառի ընթերցող հասարակութեան մէջ. իւրաքանչիւր թիւր գարգարւած կըլլար Թոփճեանի առաջնորդողներով և խուլ ու մոռացւած անկիւններէն ստացւած թղթակցութիւններով։

Թոփչեանէն յետոյ Վրացեան, Շաւարշ Միսաքեան, Մարալ։

Պոլսական և ուրիշ թերթերու կողքին յայտարարւած կը տեսնէինք միշտ՝ «Յառաջ» օրգան Բարձր Հայքի երիտասարդութեան». և Բարձր-Հայքը առանձին հմայիչ հնչիւն մը ունէր մեր ականջներուն։ Իրապէս վեց վիլայէթ կոչւած հայաբնակ նահանգներէն ոչ մէկը այնքան աւելի հայկական էր, հայ պատմական անցեալէն խօսող և մեր յեղափոխական գրւածներու թատերավայրը հանդիսացող, որքան Վասպուրականը, Տարօնը և Բարձր-Հայքը. վերջինս կը կամենար ղեկավարի դերը ստանձնել ամբողջ Արեւմ. Հայաստանի։

Կը յիշեմ սրտի յուզումով բարախումով մը 913-ի օգոստոսը։

Սանասարեանի սրահի մէջ համոյալի երեկոյթ մըն է սարքած Կարնոյ երիտասարդութիւնը ի պատիւ ընկեր հիւրերու. ներկայ են Զաւարեան, Վրամեան, Եեչօ, Մուշի մէջ նահատակւած Աւետիս (Մառթէոս) և ուրիշ շատ շատեր. ճառեր, կենացներ, բարեմաղթութիւններ. ինչպէս անխառն էին այդտեղ խօսւածները, ինչքան անկեղծ և գաղափարական ազնիւ թռիչք ունէին...

Կուզեմ յիշել այստեղ ռուսահայ ընկերներէն մէկի այս խօսքը.

— Օլգենին *) չարամտաբար թէ թիւրիմացաբար, մեր գալով այս նիւբական վայրերը «Անհետացող Հայաստան» անւանեց մեր երկիրը, իսկ ես և իմ ընկերները ծանօթանալով մի փոքր Մուշի, Եռուսի, Կարնի և Բասենի հետ, առանձին հպարտութեամբ և համարձակութեամբ կասեմ, որ Հայաստանը վերածնւում է. պէտք է անւանել սակէ յետոյ ոչ թէ անհետացող, այլ «Վերածնւող Հայաստան»։

Ոլի՜ մաքէն կանցնէր այդ գեղեցիկ ժամին, որ մենք հրաբուխին խառնարանին շուրջը կը բնակինք, թէ մեր ներքևը երկրասասան աղէտն է, որ պայթիլ կըսպառնայ...

... Ու պայթեց այդ սարսափելի աղէտը. ամեն ինչ կորաւ թանձր և պղտոր լաւայի տակ, մոնղոլական վայրագ և արիւնռուշտ հրախը լափեց բոլորը։

Այսօր սարսափելի ու քստմնեցուցիչ եղեռնի վրայ քաշւած թանձր վարագոյրն է որ կը բացւի ու... ինչն է մեր տեսածը այդ վարագոյրին ետեւը։

Ո՞ր մարդկային միտքը կամ գրիչը պիտի կրնար խօսել անխռով երեկւայ և դարհուրելի այսօրւայ վրայ. տարբերութիւնը այդ երեկւայ և այսօրւայ մէջ 4—5 ամիս է միայն, բայց ո՞ր կախարդական ձեռքը գրաւոր դժոխքի փոխարկեց, խինդ ու բերկրութիւնը, հարուստ և բազմակողմանի այդ կեանքը լուռ ու խաւար գերեզմանոցի, սահմռկեցնող խեղացնոր դամբարանի...

Ո՞ւր կորան «Յառաջ»-ն ու իր «Բարձր Հայքի երիտասարդութիւնը».

Ո՞ւր կորաւ մշտախօսը Մարալ-Փիլոսը, այդ գործունեայ երիտասարդը, որ 16 տարեկանէն միայն կրցած էր ինքնաշխատութեամբ գրագիտութիւն սորվել, բարձրանալ Բաթումի բանւորական շրջանէն, իբրև տիպարենտելիգենտ երկիր մտնել, տարիներ շարունակ գաղտնի ման գալ Կարին, Օվայի գիւղերը, Տրապիզոն մինչև որ սահմանադրական շրջանին առիթ ունենար բեմ դուրս գալու, խօսելու և գրելու։

Ո՞ւր կորաւ Գեղամ Ասատուրեանը, նա որ թողուց Կարինը, գնաց Մուշի Ռուբէնի ետևէն այն ատեն, երբ ոչ մէկը յանձն չէր առնէր գործելու Դաշտի անհրապոյր միջնոլորտին մէջ. Յաց նա հոն, մինչև որ Վանի դէպքերու վաղորդայնին իր մաքուր յեղափոխականի շունչը փչեց կախաղանի վրայ Բիթլիսին մէջ։

Ի՞նչ եղաւ Ղազար-Զարըքը, այդ ժպտուն երիտասարդը, որ նստած կ'ըլլար միշտ «Յառաջ»-ի խմբագրատան մի անկիւնը, կամ կը մտածէր և կամ կը գրէր։

Ո՞ր դաժան ձեռքը համարձակեցաւ բարձրանալ համակրելի Մարուքէ Մարունեանի վրայ.

Ո՞ւր կորան Արտաշէս Գալաֆեանը, համակ եռանդ և ոգեւորութիւն մեր Իգիթխանեանը.

Ի՞նչ եղաւ բանաստեղծ Շահ-Արմէնը, Միսաք Կոթոլեանը, Աւրունին, Օտաբաշեանը.

Ո՞ր բորենին լափեց «Սանասարեանի» և «Արծնեանի» դպրոցական սերունդը. Հայոց հսկայ և հոյակապ եկեղեցին, Սանասարեանն ու իր ծառազարդ պարտէզը թափուր են այժմ, չի դառնար ալ «Յառաջ»-ի մամուլ...

Օ՜, խելացնորիչ մտածողութիւն...

Վարագոյրը քաշւեցաւ, իսկ մենք այժմ ականատեսի դժնդակ դերն ունինք. և ակամայ հարց կուտանք մենք մեզ.

«Ո՞րն էր լաւ, մեալ ինքնամոռաց տարտամութեան մէջ և յուսալ... թէ տեսնալ անհելի այս իրականութիւնը... «Օ՜, ինչպէս փրկել այս աչքերը...»։

Բաունակ

*) «Բիրժևիէ Վեդոմոստի» թերթի թղթակիցը, որ նոյն տարին ման էր եկած Հայաստանը։

ԱՌԱՋԱՐԿ ՄԸ

Ներկայ ժամանային ցուրտ օրերուն անբախտ փախստականներու հարցը հետզհետէ սուր կերպարանք մը կառնէ, Դժգոհութիւն, տրտունջ ամեն կողմէ, գեղծում՝ թէ նպաստ տւողներու և թէ ընդունողներու կողմէ. և լրագիրներու էջերը կը լեցւին տխուր և հայութեան ոչ պատւաբեր լուրերով ու նկարագրութիւններով։

Երբ գաղթականութիւնը նոր թափւեցաւ Կովկաս, ու շատ տեղ ճանճերու պէս կոտորւեցան բացօթեայ, մերկ, անսնունդ, անդեղ, անդարման մնալով, այն ատեն ըսւեցաւ թէ յանկարծակիի եկան և նախապատրաստութիւն եղած չէր։ Իսկ հիմա, երբ օգոստոսէն սկսեալ տաք շրջերու պատրաստութիւն կը տեսնւի, ու շատ տեղ նոյնիսկ հոս Թիֆլիսի մէջ շատ փախստականներ կիսամերկ կամ ցնցոտիներով կը մնան, այս անփութութիւնը ինչ պատճառի վերագրելու է։

Մարդու պակաս չկայ այժմ, ընդհակառակն։ Փախստականներու մէջ եղած մտաւորականները և գործիչները այժմ քիչ շատ սթափած իրենց պատահած անհաւոր աղէտէն և կազդուրւած ամիսներով իրենց քաշած հիւանդութիւններէն, ասպարէզ իջած գործ կը փնտռեն։ Այսպիսիներուն երբեմն ոչ պատասխանատու (տեղական բացատրութեամբ) երկրորդական գործեր կը յանձնւին, բայց երբեք անոնց կարծիքը չեն ուզեր լսել. անոնց առջև փակ են կոմիտէներու և յանձնաժողովներու դռները, որոշումներ բէկարկած ատեն, որոշումներ, որոնց հետեւանքները՝ իրենք փախստականները պիտի կրեն։ Այս կոմիտէները և ընկերութիւնները, լոկ կովկասահայերէ կազմւած՝ կը գործեն խրաքանչիւրն իր ուղղութեամբ, իւրաքանչիւր իր փառքին համար, երբեմն իրարու հակառակելով կամ քանդելով ու փճացնելով իրարու շէնքը։ Անոնք ունին իրենց ձեռքին տակ բազմաթիւ ամսականաւոր պաշտօնեաներ, որոնք յա-

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Թիֆլիս, 13 փետրուարի

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԲԱՑՈՒՄԸ

I

Ամէն անգամ, երբ բացւում են Տաւրիկեան Պալատի դռները նոր ճառերի ու հանդիսաւոր յայտարարութիւնների համար՝ յոյսի մի աղօտ ճառագայթ է անցնում ամբողջ կայսրութեան վրայից, Ռուսաստանի առաջադիմութեան բոլոր անկեղծ բարեկամները մի վայրկեան յուզւում են, ոգեւորւում, մի վայրկեան բարձրանում է ընդհանուր տրամադրութիւնը... բայց և ամէն անգամ, նոյն անայլայլ անտարբերութեամբ զարնում է մակընթացութեան տխուր ալիքը, նորէն իջնում է հասարակական տրամադրութիւնը, նորէն յոյսերը տեղի են տալիս ամենացաւոտ յուսախաբութեան։

Այս անգամ Դումայի բացումը կոթողւեց մի նշանաւոր անցքով։ Թագաւոր Կայսրը անցաւ Պետական Դումայի նիստերի դահլիճը, ընդունւեց ցնծագին ուռայով, գրեց Իր անունը Պատուաւոր Այցելուների ոսկեայ գրքում և ապա մեկնեց Տաւրիկեան Պալատից։

Առաջին անգամն էր՝ Դումայի գոյութեան սկզբից ի վեր։ Եւ այդ աննախընթաց դէպքը չվրիպեց հանրային ուշադրութիւնից։ Ռուսաստանի գրեթէ ամբողջ մամուլը արձանագրեց այն խորունկ գոհունակութեամբ։ Կայսերական այցը Դումայի բացման օրը, արդարև, ստանում է պատմական և սկզբունքային մեծ նշանակութիւն։

...ճախ տատական իմաստով կը գործադրեն իրենց հաղորդուած որոշումները և հրամանները առանց նախաձեռնութեան ոգիի և առանց ճանաչելու գաղթականները ու անոնց տարբեր պէտքերը։ Վերջապէս կատարեալ քաոս մը ստեղծուած է։ Ալ եկած է ժամանակը, որ վերջ մը տրւի այս տխուր վիճակին։

Եթէ կովկասահայն ճանչցած ըլլար մեր իրականութիւնը, բոլոր նպաստաբաշխող մարմիններն իրենց ժողովներուն մէջ խորհրդակցութեան կը կոչէին փախստականներէն ալ ներկայացուցիչներ, տալով անոնց արժանաւոր տեղ, թող ըլլար որ անոնք նոյնիսկ նպաստ ընդունելու կարօտ վիճակի մը մատնուած ըլլային։

Վաճեցի

ԿԱՄԱՒՈՐԻ ՕՐԱԳՐԻՑ

II

Շարժւում ենք Ա...ի ընդարձակ կէսարշին ձիւնով ծածկւած դաշտով. մօտենում ենք Ծաղկանց լեռների թևերի տակ մտած Զ... գիւղին։ Ընդառաջում է գիւղի ռէսը։ Հինգ րոպէից յետոյ տեղաւորւած ենք հայի չէն օջախում։

Գիւղը քիչ է աւերւած, բնակչութիւնը երկսեռ է ու լրիւ. անկախ է. տարիներ շարունակ ճակատել է Ալադաղի աւազակաբարոյ քիւրդերի հետ։

Պատմական անցեալ ունի. դրա վկան գիւղի հոյակապ եկեղեցին է, թառած Եփրատի ափին։

Խմբապետ Զ-ի հետ մի հարուստ օջախում ենք. ուշ է արդէն։ Ներս է մտնում տան աւագը, որ նոր է վերադարձել քիւրդերի մօտից և նկարագրում է նրանց մէջ տիրող սարսափը։ Շատ անհանգիստ են քիւրդերը։ Դրօի բանակի յայտնւելը սարսափ է տարածել, աչնան դէպքերը խրատական են եղել և այժմ հայի բախտի վրայ հեգնանքով նայող քիւրդը սարսափում է ու Դրօի ներողամտութիւնը խնդրում։

Ալադաղի փախած քիւրդերը նորից վերադարձել են իրենց գիւղերը և հլու հպատակութիւն յայտնել։ Ստոյգ աղբիւրից տեղեկացւում է, որ Ջիլանայ ձորն են իջել բաւական թւով հետևակ ասկեար։

Առաւօտեան մեր սրտանց շնորհակալութիւններն ու գոհունակութիւնը թողնելով գիւղում, իջնում ենք դէպի ս. Օհաննու (Ուչ-Քիլիսէ) վանքը։

Զանգուն է վանքը, առանց վանահօր, գիւղի բնակչութիւնը քիչ է, տղամարդիկ են բացառապէս։

Վեհօրէն բարձրանում է 1904 թւականը, մի սև թւական մեր գործի. անցնում են չարիչար մտքիս առջևով Օլթի—Թուժան, Մոսուն—Դայլ Վահան, Ծան և ապա Ուչ-Քիլիսէ։ Եւ չորս ընդհարումից և ոչ մէկը յաղթական չեղաւ։ Մի չարաբաստիկ տարի էր, որի տակից էլի պատւով դուրս եկաւ, նյուսահատւեց, շարունակեց նորից հայ կեանքի մարտական ուժը։

Վանքի պարիսպների տակ ենք. 1904 թւին այս նոյն վանքում մի խումբ Հնչակեան տղաներ հերոսական մարտնչումից յետոյ, որ մեր յեղափոխական կեանքի մի գունաւոր էջն է անպայման, նահատակւեցին։ Դարձեալ մեր արթնացումի մի փայլուն նշանաբան... Քրիստոնէական հաւատի այդ հոյակապ սրբավայրը իր գիրկն էր առել ռազմիկների մի խումբ... Ջինը հասու է, դերեզմանները կուզէի տեսնել... Հրամայւած է չկանգնել։ Անցնում ենք դէպի Դ...գ..., այնտեղից Մ... հայ գիւղը։ Գիւղի կէսն աւերակ է։ Իջնում ենք ու տեղաւորւում մի կերպ։ Շրջակայ գիւղացիք արդէն իմացել են բանակի ժամանումը։ Մոտակայ Մ... գիւղից նախկին Ներսիսեան դպրոցում սովորած մի երիտասարդ Դրօի գրած մի փոքրիկ տոմսով խնդրում է խմբից 50—60 հոգի ուղարկել իրենց մօտ, ուզում են հիւրասիրած լինել։ Դա անհրաժեշտ հրամայական է։ Կամաւորութիւն և հայ գիւղացի նոյնանիշ են, մէկը միւսին լրացնող տաճկահայը այդպէս է ըմբռնում։ Քրդական յարձակումները դադարել են իսպառ և Ա...ի դաշտի գիւղերն ապրում են ազատ, աշխատում են կրկին, գարնան աշխատանքի պատրաստութիւններ են տեսնում։

Չէ որ հողը նրանն է, ով սիրում է այն, կապւած է նրա հետ, մշակում է, ապրում և ապրեցնում...

Գ. Շահինեան

ԹԻՒՐՔ ԴԵՍՊԱՆԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

Թեհրան, 1 փետրուարի

Անցեալ շաբաթ թրքական դեսպանը աւստրիական դեսպանատան ծառայողների հետ, քաղաքի հիւսիսային կողմը գտնւող Վեարդաւեար գիւղն էր գնացել որսորդութեան անունով։ Ենթադրւում է, որ գաղտնի մի ժողով կար Մուստոֆի-Մամալէքին (Նախկին պրեմիէր) պատկանող այդ գիւղում և իբր թէ վերջինս էլ ներկայ պիտի լինէր։ Այլապէս ռուսական զօրքի անցուդարձի շրջանում գտնւող այդ գիւղում որսի գնալը ոչ մի միտք չունէր։ Ձերբակալութիւնը այսպէս է բացատրւում։

Յունւար 27-ին Քարաջի ռուսական պահակախումբը իր շրջանում զինւած մարդկանց հանդիպելով, ձերբակալում է նրանց։ Քարաջի հրամանատարը յայտնում է դեսպանատան, որ ձերբակալւածներից մէկը իրենց թրքական դեսպան է անւանում։ Դեսպանատան պաշտօնեաներից մէկը ուղարկւում է նրա ինքնութիւնը պարզելու։ Ձերբակալւածները լինում են թրքական դեսպանը, աւստրիական զինուորական կցորդը, մի բժիշկ և Աւստրիայի երկու զինուորականներ մի քանի ծառայողների հետ։

Աւստրիական դեսպանն էլ որսատեղում է եղել և միայն մի ժամ առաջ է հեռացած եղել։ Լսելով ձերբակալութիւնը, սա անմիջապէս արտաքին գործերի մինիստրութիւնն է գնում և բողոք ներկայացնում։ Այնուհետև նա շահին էլ է ներկայանում (երկու օր յետոյ) և կրկին բողոքում։ Բողոքներ են ներկայացնում աւստրիական և թրքական դեսպանատները։ Վերջինիս դրօշակը մի օր ամերիկականով է փոխարինւում։ Իսկ երկու դեսպանատների ծառայողները մինչև այժմ էլ շարունակում են ամերիկական դեսպանատանն ապաստանել։ Պարսից կառավարութիւնը դիմումներ է անում ինչպէս ռուս-անգլիական դեսպաններին, նոյնպէս և Պետրոգրադ ու Լոնդոն, որոնց ի պատասխան ռուս կառավարութեան որոշումն է յայտնւում։ Այդ կայանում է նրանում, որ թրքական դեսպանը իրեն արժանի պահակախմբով Ռուսիայի վրայով կը տարւի մինչև Շւէդիայի սահմանագլուխը և ապա կը թողնւի։ Իսկ աւստրիացի ձերբակալւածները, իբրև զինուորականներ և ռուսական գերութիւնից խոյս տւածներ, կը պահւեն իբրև գերիներ։ Դեսպանը դեռ Քարաջում է պահւում։ Երեկ սպանական դեսպանը Քարաջ էր գնացել նրա հետ տեսակցելու։

Մինչդեռ մայրաքաղաքում թրքական դրօշակն էր ցած բերւելու դատապարտւում, Սուլթանաբադում նոյն թրքօ-գերմանական միութեան ինտրիգների շնորհիւ իջեցրւած անգլիական փոխ-հիւպատոսարանի դրօշակն է բարձրացւում մեծ հանդիսաւորութեամբ, ռուս զօրքերի և պաշտօնատար անձանց ներկայութեամբ։ Փոխ-հիւպատոսը, որ Թեհրան էր եկել, կրկին իր պաշտօնին է հաստատւած։

Հակառակ ռուսական զօրքերի ներկայութեանը՝ Սուլթանաբադում, նրա շրջակայքում երբեմն երբեմն ժանդարմ-մուջահիտական խմբեր են յայտնւում։ Վերջերս երևան եկող ժանդարմների խումբը, չէզոքցի Փուլէթի ղեկավարութեամբ, անյայտ ուղղութեամբ հեռացել է։ Նրա փոխարէն բախտիարիներ են յայտնւել, որոնք իբր թէ թնդանօթ էլ ունին։

Առանց ուշադրութիւն դարձնելու նրանց վրայ, ռուսական զօրքերը Սուլթանաբադի վրայով առաջ են անցել և հակառակորդի մեծ ուժերը ցրելով Նահաւէնդը գրաւել։ Շարունակելով իրենց ընթացքը զօրքերը երկու օր առաջ գրաւել են նաև Բրուջէրդը, ռազմագիտական կարևոր այդ կէտը, որ Քիրմանշահի հարաւ-արևելք գծի վրայ է ընկած։

Յարաբերութիւնները Քիրմանշահ Սպահանի հետ դեռ շարունակւում են, թէև ոչ առաջւայ պէս կանոնաւոր կերպով։ Սպահանում գտնւած գերմանոֆիլ տարրերը այժմ ընդդիմադիր գործունէութիւն են որդեգրել։ Նրանք շարունակական գաղտնի ժողովներ են ունենում, սերտ յարաբերութիւն պահպանում Քիրմանշահի, Շիրազի հետ, ուժերի տեղափոխութիւն կատարում և այլն։ Անպայման Սպահանի վրայով է, որ վերջերս մեծ քանակութեամբ ռազմամթերք է հասել Շիրազ։ Հասել են նաև գերմանացիք։ Այստեղ ինչ որ պատրաստութիւններ են տեսնւում։ Թւում է թէ Բուշիրի վրայ են ուզում յարձակւել։

Ինչպէս երևում է, Ղաւամ-Մուլքը օգնութիւն չստանալով Ղաշղայիներից ու այլ ցեղերից, քիչ-քիչ հաշտւում է ստեղծւած դրութեան հետ և վրէժխնդրութեան իրագործումը յետաձգում է։

Համարեա նրա ուղղութեան պատկանող մէկը վերջերս ազատւել է Թեհրանի բանտից։ Էքս-շահի գործակալ ծառաներից Մուջալալ է, որ 3—4 տարի առաջ Քիւրդիստանի ցեղերից ուժեղ բանակ կազմած, կռւում էր սահմանադրական կառավարութեան դէմ։ Ատրպատականում ձերբակալւեց և ուղարկւեց Թեհրան, ուր մօտ երկու տարի բանտումն էր։

Թւում էր, թէ նա ազատ է արձակւել որոշ ծառայութիւններ կատարելու նկատումով։ Արդէն խօսում են, որ նա շուտով Քիւրդիստանի շրջանն է անցնելու և իր ազդեցութեան ենթարկւած ցեղերից հակաթրքօ-գերմանական շարժում առաջ բերելու։

Համառ կերպով լուրեր են տարածւած, որ էքս-շահի կողմնակիցներ Զիլլի-սուլթանն ու Ամիր-Բէհադուրը, որ ներկայումս արտասահմանումն են գտնւում, Պարսկաստան են վերադառնալու։

Թեհրանի պետական հիւանդանոցը ռուսների տրամադրութեան տակ է դրւած։ Արդէն տեղ են հասել բժիշկներ և Կարմիր Խաչի գթութեան քոյրեր։

Ղումում եւս մի հիւանդանոց է բացւել ռուս զօրքի համար։

Է. Լ. մ.

ՀԱՅ ԳԵՐԻՆԵՐ

Տեղւոյս հայ գերիները վերցւած են անցեալ դեկտեմբերի 24-ին Սարիկամիշի և Արդահանի ճակատամարտում։ Ասոնց շարքին կան փախստաւորներ, կան հայ զինուորներ և մի քանի հոգի ազատ տաճկահպատակ հայեր, որոնք առանց հարցաքննութեան գերիների շարքը կը մտան մինչև ցայժմ։

Հետևեալներն են տեղւոյս հայ գերիները.

Արամ Քոչէ Վարդանեան, Ալաշկերտի Խաստուր գիւղից, Զաքար Տ. Վարթանէսեան, Բաբերդի Վարդահան գ., Համբարձում Գաբրիէլեան, Բաբերդի Թուշտի գ., Մանուկ Թադէոսեան, Խոպերի Մգըրըք գ., Քրիստափոր Խաչատուրեան, Կարինի Քերքեթցի, Մուրադ Համբարձում, Կարնեցի, Արշակ Գրիգոր, Կարինի Չէֆթլիք գ., Քերէմ Վարդանեան, Պայազէտի Մուսուն գ.,

Եղիա Մովսէսեան » » »
Եփրեմ Մաթիկեան, Սեբաստիա-Զարացի
Վարդան Դիւրկերեան » Շար.-Գար.
Երւանդ Ընթըրեան » Ենի-Խանցի
Արմենակ Թորիկեան » Մարզւանցի
Յակոբ Օղաքաշեան » »
Տիգրան Գանտիլեան » »
Գալուստ Մեծատուրեան » Սիս-Հաճի
Ներսէս Եռովբեան » Խազմախարա
Գրիգոր Մարտիրոսեան » Խանխան-մանչլը
Լեոն Մսրեան » Տէքնտըր
Յարութիւն Շիշմանեան, Երզնկացի
Սիմոն Մարգարեան »
Խաչիկ Գրիգորեան »
Ահարոն Զատիկեան, Պոլիս, Ատապազ.
Կարապետ Նազարէթ » »
Կարապետ Յակոբեան » »
» Աստուրեան, Խարբերդի Արօզիկ
Տիգրան Ըմիեան » Նիգմիա
Աստուր Սարգիսեան » Ատիեաման
Գասպար Թորոսեան » »
Վասիլ Սարգիսեան » »
Սարգիս Յարութեան » Գէմնեցի
Խաչիկ Յովհաննիսեան, Իզմիտ,
Սարգիս » Վան, Ախլաթ-գմալ
Յարութիւն Սերոբեան » Ալճէվազ
Մանուկ Մկրտիչ Մուշի Չրեկ
Ղազար Յովակիմ » Ծափնայ
Աւագ Յարութիւն Վանի Բաշլու
Մնացական Վարդանեան » »
Գէորգ Եղիազարեան » »
Բաղդասար Եղիա Տիգրանակերտ
Մուրադ Արեշատ Ալաշկերտ-Ցամաթ
Սարգիս Յակոբեան Գիթլիս Խուլտիկ

Հայ գերի՝ Արամ Քոչէեան

Սաւուդ. Շէկոմա.

ԳԵՆԵՐԱԼ-ԼԷՅՏԵՆԱՆՏ Տ. Դ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

«Հորիզոն»-ը գուժից հայազն գեներալ-լէյտենանտ Տիգրան Դանիէլովիչ Յարութիւնեանի ցաւալի մահը։ Երբ նուաստս պաշտօնավարում էի Օլթիի շրջանում, սրանից ութ տարի առաջ գեներալ Յարութիւնեանը այնտեղ կազմների պետ էր և անչափ սիրւած բոլոր կազմերից, զինուորականներից ու ժողովրդից։ Նա օգնութիւն էր հասցնում բոլոր ազգերի աղքատներին։ Օլթի ատանում և իր շրջանում շատ անմաքներ տարին տասներկու ամիս նրա հացն էին ուտում և օրհնում նրա կեանքը. հանգուցեալը անխտիր օգնում էր ռուսին, հային, թուրքին և քիւրդին։ Տիգրան բէկը երբէք չէր մոռանում ոչ մի հայկական տօն. այդ օրերին լինում էր հայոց եկեղեցում և նւիրում էր իր լուման դպրոցին, եկեղեցուն, թշւառին։ Նրա հիւրընկալ սեղանը ամէն օր բաց էր հայի և օտարի համար։

Փետրւարի 1-ին գիւղիս ս. Խաչ եկեղեցում խուռն աղօթողների ներկայութեամբ կատարւեց հոգեհանգիստ և խօսւեց գեն. Յարութիւնեանի մասին և բացատրւեց ժողովրդին ինչպէս ներկայ հանգուցեալի, նմանապէս և միւս հանգուցեալ հայ գեներալների մասին։

Առաքել Քահ. Բլրցեան

Սուլդա (Ախալքալաքի գ.)

ՊԱՏԵՐԱԶՄ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏ. ՀԵՌ. ԳՈՐԾ.)

ԳԵՐ. ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՇՏԱԲԻՑ

11 փետրուարի

Արեւմտեան ճակատ.— Ռիգայի շրջանում և Դւինա-Օգեր-Պրոստինհոֆ գծի վրայ երևացին գերմանական օդանաւեր, որոնք ռումբեր նետեցին։ Օգերի շրջանում թշնամին գիշերն ուժեղ կերպով կրակում էր և հետախոյզներ էր ուղարկել դէպի մեր խրամատները սպիտակ խալաթներով. մեր կրակով հետախոյզները յետ մղւեցին։ Դւինսկի դիրքերի վրայ Պոնևեժի երկաթուղու շրջանում և Զարտորիյսկի հիւսիսային կողմը մեր զօրամասերը, յետ մղելով թշնամուն, առաջ անցան։ Գելեժի շրջանում, Օլիկայից դէպի հարաւ-արևելք, թշնամին ամենից աւելի կրակի ենթարկող տեղերն էր ուղարկում աշխատանքներ կատարելու համար կանանց, ըստ երևոյթին ռուս։ Գալիցիայում Տարնոպոլի հիւսիս-արևմտեան կողմը Գլեադկի և Վորոբեօվկա գիւղերի շրջանում մենք պայթեցրինք մի ական և գրաւեցինք գոյացած փոսը։ Մի խալչէի մօտ թշնամին փորձեց յարձակւում գործել մեր գրաւած փոսի վրայ, բայց յետ մղւեց մեր կրակով։

Սեւ-ծով.— Մեր սուզանաւը Բոսֆորի մօտ երկու անգամ ապարդիւն յարձակման ենթարկւեց թշնամու օդանաւերի կողմից։ Սուզանաւը ոչնչացրեց քարածուխով բեռնւած մի առագաստանաւ։

Կովկասեան ճակատ.— Մեր զօրամասերը շարունակում են աջողութեամբ նեղել թշնամուն։

ՏԱՃԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՍԵՒԱՍՏՈՊՈԼ, 10 փետր.—Մեր նաւերի կողմից թիւրքական [illegible] շրջանի ամրացած դիրքերի ռմբակոծութիւնը կատարւած է փայլուն կերպով։ Նաւերի չափազանց անվրէպ կրակը բառացի կերպով սրբում էր թշնամուն և փախուստի մատնում նրան, որով նպաստում էր ռուս հետևակազօրքի առաջխաղացութեան։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

ՓԱՐԻԶ, 10 փետր.— Երեկոյեան պաշտօնական հաղորդագրութիւն. Վերդիւնի շրջանում գերմանացիների յարձակումը ծաւալւում է, ընդունելով խոշոր կռւի չափեր։ Կռիւը շարունակւում էր այսօր աջող յարուածութեամբ։ Մեր զօրքերն եռանդուն կերպով մասնակցում էին, ահագին կորուստներ պատճառելով թշնամուն։ Խոշոր թնդանօթների անընդհատ կրակը, որին մեր արտիլերիան պատասխանում էր հաւասարաչափ կատաղութեամբ, ընդգրկել է գրեթէ 40 կիլոմետր մի ճակատ, այսինքն Մոլենկուրի և Էտենին կից գտնւած տեղի միջի տարածութիւնը։ Բրաբան-Սիւր-Մեօզի և Օրնի միջև օրւայ ընթացքում գերմանական հետևակ զօրքը մի քանի անգամ յարձակւում գործեց մեզ վրայ խոշոր ուժերով, որոնց կազմի մէջ մտնում էին եօթ զանազան կորպուսների մասեր։ Հոմոն գիւղի մօտ թշնամուն, չնայելով իր արած ջանքերին, չյաջողւեց դուրս վանել մեզ մեր դիրքերից։ Կոր անտառում, որի մեծ մասը մենք շարունակում ենք մեր ձեռքին պահել, հակայարձակումներով դադարեցրինք թշնամու յառաջխաղացումը։ Կոր անտառի արևելեան կողմը գերմանացիներին, մի քանի արիւնահեղ յարձակումներից յետոյ, աջողւեց մտնել Վաւրիլ անտառը։ Օրնից դէպի հիւսիս թշնամու յարձակումները Գեբերուայի մօտ մեր ունեցած գծի դէմ դադարեցրինք մեր հակա-յարձակումներով։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՍՈԼՈՒՆ, 9 փետր. — Լաւատեղեակ աղբիւրից հաղորդում են, որ Բուլղարիայում կենսամթերքի հարցը այնքան էլ լուրջ չէ, ինչպէս ասում են։ Հեշտութեամբ են ճարւում հացն ու միսը. սակայն շաքարը, սուրճն ու նաւթը համարեա անհետացել են երկրից։ Առանձնապէս զինուորական աստիճանաւորների միջև նկատւում է ոգևորութեան սաստիկ անկում։ Ռուս Կայսրի մանիֆեստը, որով մոռացւում էր Բուլղարիայի անարժան վարմունքը և յայտարարւում էր պատիժը, սկսւում է տարածել ժողովրդի միջև, որ յուզւումով է մատնում ռուս զօրքերի Բուլղարիա գալու հաւանականութեան մասին։

Ընդհանուր կարծիքն այն զարնան առաջին օրերից անգլօ-ֆ սիացիները կանցնեն յարձակման Բուլղարիային կը դնի ճգնաժամայի րութեան մէջ. Գերմանները սիր ընդունւում Բուլղարիայում և չ ւած հակակրութիւն են պատճառ

Սկոպլէի մօտ 2 գերմանացի ւորներ, որոնք բռնութիւն էին գրել 15 տարեկան մի բուլղար վրայ, սպանւեցին բուլղար զինւոր կողմից։ Հրաձգութեան ձայնով վայրը փութացին գերման ու բու զինւորները։ Տեղի ունեցաւ կա կռիւ։ Երկու կողմերի կորուստ հասնում են հարիւրաւոր սպան ների և վիրաւորների։

Սոֆիայում սկսել է գլուխ բ բացնել ընդդիմադիր կուսակցութ որ փորձում է բացատրել ժողովր որ Գերմանիայի հետ միութիւն կործանէ Բուլղարիային, եթէ Ռ ւովի կառավարութեան սխալը չ իր ժամանակին։

ԱԹԷՆՔ, 10 փետր.—Ստացւած դեկութիւնների համաձայն, գեր նական ղահաժառանգը մօտ ա մտադիր է այցելել Սոֆիա և Պ «Իստիան» այդ լուրի մէջ գտնո Գերմանիայի տկարութեան և Սոլ վրայ յարձակման անկարելիութ նշանը։ Գերմանիան յոյս ունի Թ քիային և Բուլղարիային դրդելու նոր ճիգերով կռւեն Բալկաններու

ԱՆԳԼԻԱ

ԼՈՆԴՈՆ, 10 փետր.— Համայն րի պալատ. Բալֆուրը յայտարար է, որ Միջերկրականի ծով ուժերի բարձրագոյն հրամանատա րութիւնը յանձնւած է ֆրանսիա նաւատորմիղի գլխաւոր հրամանա Ֆուռնիէին։ Դուքս Աբրուցկին րամանատար է Ադրիատիկ ծովի տակայ ջրերի ծովային ուժերի վ իսկ անգլիացի սպաներին յանձ է ուրիշ շրջանների ծովային ուժ Բալֆուրն աւելացրեց, որ Միջերկր կան ծովում դաշնակից նաւատ միղի գործողութիւնների գոյն ապացոյցներն են Սոլուն և լոնեան զինւորական մեծ ուժերի խադրութիւնը, Դարդանէլի ան պարպումը և սերբիական բանակի բանիայից փոխադրութիւնը։ Վե նիս աջողութիւնը դաշնակիցն պարտական են գլխաւորաբար ի լական նաւատորմիղի ճարպկութ և եռանդին (հաւանութիւն)։

ԼՈՆԴՈՆ, 10 փետր.— Թագաւո Բուկինգեմի պալատում ընդունեց ժուռնալիստներին, որոնք նորին ծութեան ներկայացւեցին ռուսա դեսպանի կողմից։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄ

ԷՐԶՐՈՒՄԻ ԳՐԱՒՄԱՆ ԱՌԹ

Կովկասեան բանակի Օգոստ Գլխաւոր Հրամանատարը հետ հեռագիրն է ստացել Պետ. Դու Նախագահից.

«Խորին հիացման զգացումով գունելով տեղեկութիւնը այն կան հարւածի մասին, որ հասցր մեր թշնամուն Փոքր-Ասիայում կասեան հերոսական զօրքերը, կրկին անգամ ապացուցեցին, որ զինւորի համար վճռական առաջ ների ձեռքին անհնարին բան Պետական Դուման յանձնարար ինձ ջերմօրէն ողջունել Ձերդ րական Բարձրութեանը և խնդրե խոնարհ ողջոյն յայտնելու Կովկ բանակին և նրա քաջ պարագլու րին յանձին գեներալ Իւդենիչ նրա մերձակայ օգնականների։

Նախագահ Պետական Դումայի՝ Ռոդզեան

Կովկասեան բանակի Օգոստ Գլխաւոր Հրամանատարի հեռ Պետ. Դումայի Նախագահին.

«Խնդրում եմ ձեզ յայ Պետական Դումայի պատուա անդամներին սրտագին շնորհա լութիւն ինձ ուղղած իրենց ջոյնի համար Կովկասեան բա նրա հրամանատարների, զօր ների և Էրզրումն առնելու գործողութիւնները վարող մե կայ ղեկավար քաջարի գեն Իւդենիչի կողմից։ Ուղարկու Պետական Դումային, ամ ռուս ժողովրդի մտքերի և ցումների թարգմանին, որո

...շնորհակալութիւն իր ուղարկած խոնարհ ողջոյնի համար,
Կովկասեան բանակի Գլխաւոր հրամանատար
Գեներալ-Ադիւտանտ ՆԻԿՈԼԱՅ»

Նարոդնակութիւն արտաքին գործերի մինիստրի ճառը.

«Օգոստափառ հիւրին ու իր ուղեկիցներին ցոյց տուեց առանձնապէս յարգալից ու սիրալիր ընդունելութիւն թէ նապոնական կայսեր ու նրա օգոստափառ ընտանիքի և թէ ազգաբնակութեան լայն խաւերի կողմից։ Մենք անկեղծօրէն խորապէս գնահատում ենք այդպիսի ուշադրութիւնը, երախտապարտ ենք դրա համար և անկեղծօրէն ցանկանում ենք բարգաւաճում ու աջողութիւններ մեր հեռաւոր-արեւելքի դաշնակցին»։

Խօսելով Չինաստանի վերջին անցքերի մասին, մինիստրը գոհունակութեամբ նկատում է, որ Գերմանիայի ջանքերը՝ չինական տերրիտորիայի վրայ իրեն համար յենակէտ ստեղծելու նպատակով ...

[illegible]

...տարի առաջ այդ կարիքի անյետաձգելիութեան ու կենսականութեան գիտակցութիւնը միացրեց Դումայի մեծամասնութիւնը, երկիրը յանձին իր բազմաթիւ հասարակական կազմակերպութիւնների, յանձին զեմստուօների, քաղաքների և միութիւնների պաշտպանում էր իր ներկայացուցիչների կարծիքը, սակայն Դումայի ...ոկսած պաշտպանութեան միութեան համաժողովրդական գիտակցութեան գործը ընդհատեց Դումայի զբաղմունքների անակնկալ յետաձգումով։ Կառավարութիւնը չգիտակցեց ազգային համախմբման օգտակար անհրաժեշտութիւնը և մերժեց ամբողջ երկրի միևնոյն միտքը։ Ընդհանուր ցանկութիւնը, որ երկիրը կարողանար վստահել իր կառավարութեան և իրեն միացած զգար նրան, չարամտօրէն մեկնաբանւեց իբր իշխանութեան դէմ պայքարի նշանաբան և կրկնակի յետաձգւեց օրէնսդրական հիմնարկութիւնների բացումը։ Ժողովրդական ոյժերն ապարդիւն էին վատնւում և գժգոհու...

[illegible]

...այլ և անհապին ազգեցութիւն կունենայ համաշխարհային պատերազմի յետագայ ընթացքի վրայ։ Հայերը հաւատում են Ռուսաստանի և իր քաջարի դաշնակիցների վերջնական յաղթութեանը, հաւատում են Ռուսաստանի պայծառ ապագային, հաւատում են, որ Ռուսաց Արծւի հովանու տակ նորից ազգային ազատ կեանքով կը վերածնւի հայ ժողովուրդը իր հին հայրենիքի սահմաններում—Թիւրքական Հայաստանում, որտեղ ամէն մի թիզ հող առատօրէն ողողւած է նրա քրտինքով ու արիւնով, ու ամէն մի քար խօսում է նրա կուլտուրական մեծ անցեալի մասին (ծափեր)։

Ձխենկելին իր ճառի մի մասը նւիրում է Բաթումի և Կարսի շրջաններում տեղի ունեցած անցքերին, մատնանշելով, որ այդ տեղերի աջարացի բնակչութիւնը բանի կերպով արտաքսւած էր Թիւրքիա, նրա բնակարանները այրւած էին, իսկ գոյքը յափշտակւած։ Այս անցքերի մասին, որոնք խորապէս վիրաւորել են վրացի ժողովրդին, դաստախօսն իր իր ժամանակին յայտնել է կառավարութեան ներկայացուցիչներին, Դումայի ֆրակցիաներին և մամուլին։ Վերջում Ձխենկելին կարդում է իր ֆրակցիայի մեծամասնութիւնը դէպի ներկայ մոմենտն ու ներկայ կառավարութիւնը նրա ունեցած վերաբերմունքի մասին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼՐԱՏՈՒ

ԹԻՖԼԻՍ

Պաշտօնապէս հաղորդում են, որ փետրւարի 11-ից Նիժեգորոդսկիի փոխնահանգապետ Մատրին նշանակւել

*) Տեղի սղութեան պատճառով առնւած լինելով պատգամաւորների ճառերը գետեղել հետեւողական կարգով, Կովկասեան պատգամաւորների ճառերը տալիս ենք հերթից դուրս։ Խմբ.

...է Թիֆլիսի նահանգապետի պաշտօնակատար, Բագւի քաղաքապետ Մարտինովը՝ Սև-ծովեան նահանգապետի պաշտօնակատար, Սուրելբիցկին՝ Երեւանեան նահանգապետի պաշտ. և սենատոր Շուլգին՝ քրէական բարձրագոյն դատարանի անդամ։

Շաբաթ, երեկոյեան ժամ. $7^1/_2$ Ցոփանեան դպրոցի դահլիճում Հայ Ուսուցչական Միութեան հ. Վարչութեան հրաւէրով պ. Ստ. Տէրտէրեանը կը դասախօսէ «Պատերազմ և դպրոցական ռեֆորմ» նիւթի մասին։ Դասախօսութիւնից յետոյ կը լինեն վիճաբանութիւններ։

Պետական Դումայի անդամներ՝ Պապաջանեանի և Ջաֆարովի միջնորդութեան համաձայն, առանձին յանձնաժողովը, Հայոց Կենտրոնական կոմիտէին բաց է թողել 135,000 ռուբ., որը պիտի գործադրւի Անդրկովկասի 20 հայ որբանոցների կարիքների համար, որտեղ պահւում են 3,320 երեխաներ, իսկ Բագւի մուսուլման Բար...

[illegible]

...քայի տրամադրութեան տակն է դրել 5,380,000 ռ., յունւար, փետրւար և մարտ ամիսների համար։

Մեծ-Ղարաքիլիսայից հաղորդում են Թիֆլիսի Հայոց Գիւղատնտեսական ընկերութեանը, որ այնտեղ կազմւել է սպառողական ընկերութիւն։ Գործի նախաձեռնողներն են՝ Վ. Տէր-Խաչատրեան, փաստաբան Մխչեան և Զոհրաբեան։ Անդամավճարն է 10 ռ., մինչև այժմ գրւել են 50-ից աւելի անդամներ։ Ընկերութեան գործերը վարելու համար ընտրւած է մի յանձնաժողով 10 հոգուց բաղկացած։

Կիրակի, փետրւարի 14 ին, Արտիստական ընկերութեան դահլիճում տեղի կունենայ վրաց մանկական գրող-բանաստեղծ Շիօ Մղւիմէլիի գրական-մանկավարժական գործունէութեան 30-ամեայ յոբելեանը։

Գեներալ - մայոր Թամամշևի յանձնարարութեան համաձայն, զինւորներին և նրանց ընտանիքներին ...

[illegible]

...քամիով—1, միգրենով—3։

Փետրւարի 10-ին Թիֆլիս է ներմուծւել ալիւր - 3 վ., գարի—4 վ., եգիպտացորեն—2 վ., շաքարաւազ—1 վ., վառելափայտ—8 վ., գինի—1 վ., նաւթ—1 վ., բրինձ—1 վ.։

ԿՈՎԿԱՍ

Թեմրուկի քաղաքային դուման լսելով քաղաք. վարչութեան զեկուցումը, ցեխաբուժարան բանալու մասին, որոշեց միջնորդել կառավարութեան առաջ, պետական դրամարկղից 146,000 ռ. նպաստ ստանալու համար։

Փետրւարի 6 ին Պարսկաստանից Բագու է բերւած տաճկական դեսպան Ասիմ-բէյը։ Երգրումի գրաւման լուրը նրան հաղորդելիս՝ չի հաւատացել։

Երեւանի նահանգապետ Տիգենհաուզէնը, իր խնդրագրի համաձայն, հիւանդութեան պատճառով պաշտօնից արձակւած է։

Բորչալուի գաւառում ալիւրի և շաքարի մեծ պակասութիւն է զգացւում. նահանգապետը հաղորդել է քաղաքային վարչութեանը, որ այնտեղ ուղարկի գոնէ մէկ վագոն ալիւր և մի քիչ շաքար. ալիւրը ուղարկւած է, իսկ շաքար չլինելու պատճառով, նահանգապետի խնդիրը մնացել է անհետեւանք։

Հիւսիսային Կովկասի Կաշենկոի ալիւրաղաց ֆիրման, որ ալիւր էր մատակարարում Անդրկովկասին, մազութ չլինելու պատճառով դադարել է, այդ պատճառով միջնորդութիւն է յարուցւած պարենաւորման գործի լիազօր Շաշկովսկիի առաջ Բագւից և Գրոզնիից մազութ ստանալու համար։ Շաշկովսկին խոստացել է աջակցել։

ԹՈՒՐՔԱՑ ԿԵԱՆՔ

ԹՈՒՐՔԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՇՈՒՐՋԸ

Վերջին տարիներս Կովկասի թուրք ժողովուրդը մի առանձին ուշադրաւ հետաքրքրութիւն է ցուցահանում դէպի ազգային հասարակական հիմնարկութիւնները, դէպի կրթական գործը և այլն։ Այդ գործում յատկապէս մեծ դեր է խաղում Բագուն, և այդ բացայայտ պատճառներով։ Այդտեղ է կենտրոնացած թուրք հարուստների ինտելլիգենտ, գիտակից տարրի մեծագոյն մասը։

«Հիմմաթ» ընկերութիւնը, որի շուրջը հաւաքւած են մեծ և նշանաւոր ոյժեր, այդ տեսակէտից այժմ մի շատ կարեւոր և դժւարին գործի նախաձեռնութիւնն է իր վրայ վերցրել։ Մօտիկ ապագայում այդ կրթական ընկերութեան նախաձեռնութեամբ կազմակերպւելու է ընդհանուր Կովկասեան մուսուլման ...ցիների համագումար։ Այդ

թեան նիստերում յաճախակի խորհրդակցութիւններ են տեղի ունենում համագումարի օրակարգի և կազմակերպութեան շուրջը։

Մինչև այժմ օրակարգի մէջ մտնում են մի շարք կարևոր և հետաքրքրական հարցեր։ Դեռ ևս վերջնականապէս չէ մշակւած խնդիրների ամբողջ ցուցակը, բայց մի քանի գլխաւոր կէտեր որոշւած են։ Այսպէս, օրինակ, օրակարգի մէջ նշանաւոր տեղ են բռնելու. Նախ դպրոցական դաստիարակութիւնը թուրքերի մէջ, այդ դաստիարակութեան նպատակը, մանկավարժները թուրքերի մէջ թէ տղաների և թէ աղջիկների։ Յետոյ, դպրոցական կրթութիւնը թուրքերի մէջ։ Սրա մէջ մտնում են տարրական-ժողովրդական դպրոցների դերը և նպատակը թուրքերի համար, տարրական դպրոցի ամենայարմար տիպը, այդ դպրոցներում աւանդւող առարկաների ծրագիրը։

Իր վերջին ժողովներից մէկում «Հիջաթ» ընկերութիւնը որոշել է համագումարի նիւթ դարձնել նաև թուրք կանանց կրթութեան հարցը։ Հարց է յարուցւած ծանօթանալ ժողովրդական կրթութեան հետ հայերի և վրացիների մէջ, որպէսզի դրանով թեթևացնեն համագումարի աշխատանքները։ Այդ հարցը որոշում չի գտել։ Միայն որոշել և հրահանգել է ընկերութեան ներկայացուցիչների միջոցով ծանօթանալ Ռուսաստանի ներքին նահանգների թուրքերի կրթական գործի, ժողովրդական դպրոցների հետ։ Այդ նպատակով ներկայացուցիչները գնալու են Ուֆա, Օրենբուրգ, Կազան և այլ քաղաքներ։

Այդ համագումարը, որ առաջինն է Կովկասի թուրքերի մէջ, մի ուշագրաւ երևոյթ է կազմելու մեր հարևան ժողովրդի կեանքում և հաւանօրէն առանց հետևանքի չի անցնելու։ Այս և նման ամեն մի քայլ թուրքերի կողմից կարող է միայն մեր խորին համակրանքին և ողջոյնին արժանանալ։

Բագւեցի

ԳՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏՈՀՄԻԿ ԳՐԱԳԷՏ ԽԱՉԱՏՈՒՐ ԼԷՈՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ու ահա մէկիկ, մէկիկ կանհետին տոհմիկ գրականութիւնը մարմնաւորող մեր երէկի վարպետները։

Մեսրոպ քահանայ Ճանիկեանի և պատւական հայրենասէր ու գրագէտ դաստիարակ Յովհաննէս Կուլօղլեանի ափսոսալի մահերէն ետք, Երևանի մէջ ականատես եղանք Խաչատուր Լէոնեանի նոյնքան ափսոսալի մահւան։ Ու կը թւի թէ, բնաշխարհի հայ իմացական կարողութիւնն ալ պիտի նւազի տնտեսական-ֆիզիքական սպառումէն ետք։

Խաչ. Լէոնեան Վանի գրագէտներու հայրերէն էր։ Կրթութիւնը ստացած է 50—60-ական թւականներուն Ս. Յակոբի թաղային վարժարանին մէջ բանաստեղծ Տիգրան Ամիրճանեանի շունչին տակ Համբարձում Երամեանի և այլոց հետ։

Դպրոցական շրջանը աւարտելէ ետք ասպարէզ կը նետւի մերթ ընդ մերթ հետևելով շուկայի ընթացիկ կեանքին ու ապա կրթական ասպարէզին մէջ երկար տարիներ ուսուցչութեամբ կը պարապէ, որը սակայն իր դոմէնը չէր։ Խաչ. Լէոնեան գրական ասպարէզը ընդգրկած է շատ կանուխէն. սկզբնական շրջանին գրած է Պոլսոյ «Մասիս» շաբաթաթերթին, ապա «Բիւզանդիոն» և «Ժամանակ» օրաթերթերուն, ինչպէս նաև Ամերիկայի «Կոչնակ»-ին ու Վանի «Աշխատանք» և «Վան-Տոսպ» շաբաթաթերթերուն։ Անկեղծ գնահատողներէն եղած է Վանի կազմակերպութիւններէն Դաշնակցութեան քաղաքական և կրթական գործունէութեան։

Այն նիւթը, որ անիկա ընդգրկած է, սկզբէն իսկ շատ հազւագիւտ հետևողներ ունեցած է Վանի նորագոյն գրողներէն։ Ան խորագոյնին բանահաւաք մըն էր, ու առանց յոգնելու մրջիւնային աշխատանքով կը գրէր, կը ժողվէր բեկորները մեր ժողովրդական տոհմիկ կեանքին։

Գրած է շատ հետաքրքրական ազգագրական յօդւածներ Վասպուրականի գաւառներէն Խիզանի, Կարճկանի և Մոկսի մասին, որք ժամանակին տպագրւեցան Պոլսոյ օրաթերթերուն մէջ։ Իր ամենամեծ գործը եղած է Վանի 600 տարւան քաղաքական և հասարակական կեանքի պատմութիւնը, զորս պակւած է Իզմիրեանց մրցանակով ու ցարդ անտիպ կը մնայ։

Չգիտեմ ինչու, այդ մարդը ինծի միշտ յիշեցուցած է մեր բրոնեհան Լէոն—Քէզէտն չեմ տեսած վերջինս ու երբեք չեմ ուզեր համեմատել Լէոնեանը անոր հետ։ Սակայն և այնպէս ինծ կը թւի, թէ աշխատանքի որակը ու ընդգրկած ժանրը երկուսին մէջն ալ միատեսակ է ու գնահատելի։

1914-ի յուլիսեան զօրաշարժի օրերուն, երբ Վանի թերթերը կաշկանդւած էին թիւրքական գրաքննութեան կողմանէ, Լէոնեանը մի քանիներու հետ մնայուն արժէք ունեցող նիւթերով հետաքրքրական ու բովանդակալից կը դարձնէր թերթերը։

Վտիտ, նիհար մարմինով, խոր ընկած աչքերով ու տժգոյն դէմքով Լէոնեանը իր սովորական սատապատ փայտը ձեռին, Երևանի մէջն ալ տեսայ շատ անգամ անսահմանօրէն դառնացած ու յուսահատւած մուրացկանի մը հանգոյն իր ձեռքը նետւած քանի մը կոպէկներուն և գերազանցապէս ցեղին մասսայական ու արագ մահացումին ականատես ըլլալուն համար։ Ու քիչ չանցած՝ ահա իր վտիտ մարմինն ալ գնաց աւելցնելու այն անշուք հողակոյտերուն թիւը, որոցմէ մեր վաղւան սերունդը շատ բան ունի ուսանելու։

Հ. Բագրունի

Երևան

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Եալթայի բնակիչներից մէկը ստացել է հայերէն լեզւով մի նամակ, որի բովանդակութիւնը տալիս է տեղական „Рус. Ривьера" լրագիրը. «Այստեղ (ստ. Բուտուրլինովկա) հասաւ Էրզրումից փախած Ս. Բէշիշեան, որը պատմում է, թէ թիւրք իշխանութիւնները հաւաքել են Էրզրումի հայ բնակչութիւնը և զանազան պատրւակներով քշել են նրան մինչև Դէերջոնու։ Այնտեղ սպանդ է կատարւել։ Շատերին կախել են։ Սպանւած զոհերի դիակներն այնուհետև կամրջից մեծ գետն են թափել։ Այս բանից կարող էք գտնել, թէ ինչ է մեր վիճակը Թիւրքիայում»։

— Բուխարեստում ստացւած տեղեկութիւնների համաձայն, երիտասարդ թիւրքերի կառավարութիւնը վճռել է դէպի Հայաստան ուղարկել քիչ թէ շատ աչքառու բոլոր ոյժերը։

— Անգլիական մարտանաւերը և ֆրանսիական օդաչուները ռմբակոծել են Զմիւռնիայի մարտկոցները։ Անգլիական ուրիշ մարտանաւեր ռմբակոծել են Սիրիայի ծովափը և թիւրքական գլխաւոր բանակատեղը։

— «Dagens Niheter»-ին հեռագրում են Աթէնքից, որ Էնւէր փաշան Պոլսում այցելել է յունաց դեսպանին։ Երկարատև զրուցատրութեան նիւթն այն է եղել, որ Յունաստանը միջնորդութիւն յանձն առնի Թիւրքիայի և Համաձայնութեան պետութիւնների միջև սեպարատ հաշտութիւն կնքելու համար։ Թիւրքիան պատրաստ է հողային զիջումներ անել Փոքր-Ասիայում և Սիրիայում, բանալ Նեղուցները և ոչնչացնել Դարդանէլի ամրութիւնները։

— Պարիզ գնացած բրիտանական պարլամենտական պատւիրակութեան նախագահ լորդ Բրայսը Էրզրումի առման առթիւ ասել է «Рус. Сл.»-ի թղթակցին. «Հայ ժողովրդի գործը առանձնապէս թանգ է մեզ համար։ Չկայ աշխարհիս մէջ մի ժողովուրդ, որ տառապած լինի հայերից աւելի։ Նրանք զոհ են հանդիսանում ոչ միայն կրօնական ֆանատիկոսութեան, այլ և առանձնապէս սառն նպատակաւոր ատելութեան այն մի խումբ աւազակների, որոնք անւանւում են թիւրքական կառավարութիւն։ Տարակոյս չունիմ, որ դաշնակիցները համերաշխ կը լինին հաշտութիւնը կնքելիս դուրս կորզել դժբաղդ Հայաստանը գազանների ճանկերից»։

— Թիւրքական պարլամենտի նախկին նախագահ Ահմէդ-Ռիզա-բէյը ձերբակալւած է Էնւէր-փաշայի հրամանով։ Նրա վրայ կասկած կայ, թէ դաւադրութիւն է եղել կազմելիս կառավարութեան դէմ։

— Աթէնքից հաղորդում են, որ Զմիւռնիայի վիլայէթում մեծ յուզում է տիրում դաժանաբար Իւսուֆ-Էզէդդինի սպանութեան պատճառով։ Էրզրումի անկումն աւելի ևս ուժ է տւել այդ յուզման. զօրեղ խլրտում է նկատւում կառավարութեան դէմ։

— «Рѣчь»-ը նկատում է, որ ֆրանսիական ճակատում Վերդիւնի շրջանում գերմանացիների ուժեղ յարձակման ենթադրութիւնը իրականանում է։ Վերդիւնի բերդի և ֆրանսիացիների աջ թևի վրայ հարւած տալու համար գերմանացիները կենտրոնացրել են մօտ 30 դիւիզիա, իսկ ռազմական պահեստի զօրքերի հետ—մօտ 40 դիւիզիա։ Այս շրջանում գործում է կրոնպրինցի 5-րդ բանակը։ Հարւածը տրւելու է, ըստ երևոյթին, Մակենզենի շաբլոնով. Նախ փոթորկային կրակ բազմաթիւ թնդանօթներից, ապա յարձակում խոր փաղանգով։ Ճակատամարտը տեղի է ունենում մօտ 50 վերստ տարածութեան վրայ և արևմտեան ճակատում եղած կռիւներից ամենաարիւնահեղն է լինելու։

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացել ենք.

Եղիշէ Ցակորեանցի միջոցով Համազասպ Նազիրեանի տանը Նոր Տարու խնջոյքին հաւաքած 15 ռ.։

Նւիրատուներն են.

Թ. Շահնազարեան 2 ռ., Ե. Յակոբեան, Հ. Նազիրեան, Խ. Նազիրեան, Ց. Տէր-Խաչատրեան, Մ. Յակոբեան, Ս. Գուլ-Բուդաղով, Ե. Յարութիւնով, Թ. Ներսիսեան, Ղ. Ամիրով, Ց. Վարդանով, Մ. Մելիք-Սիմոնով, Ա. Փօղոսեան, Ց. Աւագով 1-ական ռ.։

Սուխումի հասարակութիւնից 9 ընկերների նախագահութեամբ Հ. Տատեանի միջոցով դեկտեմբերի ամսավճարը 97 ռ. 50 կ. որբերի համար, որը նւիրատուների ցանկութեամբ փոխադրւեց Էջմիածին Ամեն. Հ. Կաթողիկոսին։

Նւիրատուներն են.

Ե. ք. Տէր-Եղիազարեան, Ա. Մուսայեան, Ա. Ծնծաղեան, Ն. Ղազարեան, Մ. Զօլաքեան, Հ. Տիւտիւնճեան 3-ակ. ռ., Ս. Գարախանչեան, Մ. Տէտէեան, Ոճ, Կ. Զուաքեան, Ց. Քալանթարեան, Մ. Թէքեան, Հ. Անդրէասեան, Մ. Մուսայեան, Ս. Տէրտէրեան, Եղբ. Ց. Մուսայէլեան 2-ակ. ռ., Ե. Կլրիկեան, Ն. Սուսերեան, Ս. Զօլաքեան 1 ռ. 50-ակ. կ., Մ. Գարդիկեան, Գ. Հիւսիսեան, Ս. Ծերեան, Հ. Տաւեան, Օ. Տատեան, Վ. Զօրեան, Գ. Անանիկեան, Գ. Տէտէեան, Կ. Սահփանեան, Մ. Սալիոնճեան, Լ. Մալխասեան, Մ. Գույուքեան, Հ. Հմայեան, Ց. Արզաքեան, Ց. Խրիմեան, Ս. Շահմելիքեան, Գ. Տատուրեան, Վ. Քալանթարեան, Ց. Քիւլեան, Ա. Մարտիրոսեան, Խ. Պարոնեան, Ս. Քուլումճեան, Ս. Ճտարեան, Մ. Մելքոնեան, Զ. Գաւանոսեան, Օ. Յակոբեան, Գ. Էօքսիւզեան, Մ. Խաչեան, Ս. Գաւանոսեան, Վ. Սէմէրճեան, Ց. Բաչեան, Մ. Դաւթեան, Ց. Թորամանեան, Զ. Դաւթեան, Հ. Փահարեան, Ց. Աւետիսեան, Տ. Էօքսիւզեան, Ց. Աւետիսեան, Գ. Մելիքեան, Մ. Նալպանդեան, Ղ. Տէմիրճեան, Ց. Խաչիկեան, Տ. Վարդանեան, Լ. Տատեան, Ս. Աւետիսեան, Ց. Դանիէլեան, Ե. Մուսայեան 1-ակ. ռ., Գ. Ծաղկեան 70 կ., Գ. Աթուլեան, Ե. Խոչեան, Ց. Սէմէրճեան, Գ. Սէֆէրեան, Ս. Թովմասեան, Հ. Յարութիւնեան, Գ. Մարգարեան, Գ. Տատուրեան, Հ. Չօրպաճեան, Տ. Կանտոնեան, Ց. Մագմանեան, Լ. Գույումճեան, Ս. Ոստեան, Ց. Էօքսիւզեան 50-ակ. կ., Գ. Կանանեան 30 կ.։

Զանգեզուր գաւառի Եղվարդ գիւղացի Զաքարիա Յովհաննիսեանի տանը, նրա կնոջ, Հերիքնազի թաղման օրը ներկայ եղող ազգականներից, բարեկամներից և ծանօթներից հանգանակած 26 ռ. 65 կոպ.։

Նւիրատուներն են.

Փ. Մելիք Բաղդասարեան, Ա. Աստւածատրեան, Օ. Գրիգորեան, Օ. Սահակեան, Եփրեմ-բէկ Մելիք Ղարաքեօզեան, Ա. Բարխուդարեան, Հ. Աւագեան, Գ. Մելքումեան 1 ակ. ռ., Համզա-բէկ Մելիք-Փարսադեան, Վ. Փարսադեան, Գ. Փարսադեան, Հ. Յարութիւնեան, Ա. Փարսադեան 50-ակ. կոպ., Բ. Աւանէսեան, Ա. Տ. Յարութիւնեան, Տէր Գրիգոր Տէր-Մինասեան, Տէր-Գրիգոր Տէր-Աւանէսեան, Տէր-Ղևոնդ Տէր-Աւանէսեան 1 ակ. ռ., Կուճի Մ. Փարսադեան, Խ. Յարութիւնեան, Բ. Հայրապետեան, Խ. Շահնազարեան, Գ. Յարութիւնեան, Ց. Ալէքսանեան, Թևի Մ. Ղարադաղեան, Ա. Մեծլումեան 50-ակ. կ., Ա. Նաւասարդեան 40 կ., Ա. Հայրապետեան 35 կ., Ա. Մկրտչեան 15 կ., Գ. Յակոբեան, Թ. Առաքելեան 10-ակ. կ., Կանանց խմբակից 5 ռ. 80 կ.։

Սուխումի շրջանի Բողաղոչտա գիւղից, Արշալոյս Տէր-Յովհաննեանի միջոցով ծխական հոգաբարձութեան կազմակերպած «Աւետիսա»-յից և ներկայացման վերջը մի խումբ մարդկանցից ժողոված 122 ռ. որբերի համար։ Գումարը յանձնեց Օրբորդաց կոմիտէի որբանոցին։

Նւիրատուներն են.

Վ. Էօքսիւզեան 6 ռ. 50 կ., Հ. Բահարեան և Տ. Ոււտեան 6-ակ. ռ., Նա Աթուլեան և Ց. Ալէքսեան 5-ակ. ռ., Ա. Էօքսիւզեան, Ն. Դաւթեան, Ց. Եւլդչեան, Ց. Զատիկեան, Ա. Տէր-Յովնանեան, Գ. Մինասեան, Ց. Օղարաչեան, Ն. Գափրիկեան և Փոքր Նշան Սամոնջեան 3 ակ. ռ., Ռ. Գափրիկեան, Ուսուցիչներ, Մ. Դաւթեան, Խ. Բահարեան, Գ. Օղարաչեան, Ն. Տէպելեան, Ց. Թորամանեան, Մ. Ներսիսեան և Ա. Տէրտէրեան 2-ակ. ռ., Ս. Մանուկեան, Գ. Տէպելեան, Գ. Օղարաչեան, Մ. Բոյուըլեան, Ա. Թոփալեան, Ա. Զատիկեան, Ե. Քէրսէլեան, Ն. Օհանեան, Ս. Քէրսէլեան, Ա. Դաւթեան, Զ. Դաւթեան, Գ. Աթուլեան, Գ. Սէֆէրեան, Գ. Աթուլեան, Գ. Բոյուըլեան, Մ. Զօլաքեան, Ա. Բահարեան, Վ. Տատուրեան, Ա. Փօղոսեան, Խ. Եայլեան, Վ. Եայլեան, Ե. Տէպելեան, Խ. Զախարեան, Մ. Չօրպաճեան, Ա. Գրիգորեան, Թ. Վարպետեան, Հ. Վարպետեան, Ց. Յովակիմեան, Վ. Օղարաչեան, Բ. Մինասեան, Կ. Մինասեան և Մ. Փօղոսեան 1-ակ. ռ., Ս. Կաւանոսեան և Բ. Ներսիսեան 80 ակ. կ., Մի ոմն 74 1/2 կ., Ա. Ոււտեան, Ռ. Ներսիսեան, Մ. Փօղոսեան, Գ. Փօղոսեան, Ղ. Լորկեան, Մ. Բահարեան, Գ. Դաւթեան, Ս. Բոյուըլեան, Ս. Աթուլեան, Մ. Խաչատրեան, Ե. Եայլեան, Ե Գալաջեան, Ց. Էլազչեան, Ե. Տ. Առաքելեան, Ս. Կաւանոսեան, Մ. Սրնապեան, Ն. Վարդեան, Գ. Սամոնջեան և Ա. Մինասեան 50 ակ. կ., Գ. Մինասեան 40 կ., Վ. Աւետիսեան 35 կոպ., Խ. Մինասեան, Գ. Ալէքսեան, Խ. Բոյուըլեան և Ն. Ներսիսեան 30-ական կ., С. Писменный Ө. Уянцово և Ս. Մակարեան 25-ակ. կ., Ց. Մինասեան, Ց. Այւանեան, Ա. Եայլեան, Ն. Կաւանոսեան, И. Кутенкая և Ս. Գանուշեան 20-ակ. կ., Լ. Գուլաֆատօղլի, Կ. Քէքնէջեան և Ս. Ոււտեան 15 ակ. կ., Տ. Գուրպօսրի, Ե. Գալաչօղլի և Տ. Տանըսօղլի 10-ակ. կ., Ար. Վարպետեան 1/2 կ.։

Սարգիս Տէր-Բարսեղեանից 1 ռուբ., Գէորգ Գրիգորեանից 1 ռ., Լևոն Մաթէոսեանից 1 ռ.։

Յով. Շեկոյեանից, իր վաղամեռիկ որդու Սիմոնի յիշատակին 50 ռուբ.։

Ստ. Սմբատեանի անւանակոչութեան երեկոյթին բժ. Գ. Խաչատրեանի առաջարկութեամբ ներկայ եղող հիւրերից հաւաքած 26 ռ., որը յանձնեց Կրծանիսի որբանոցին։

Նւիրատուների ցուցակը կամաւորների բաժնում։

Գեներալ Ստ. Արտ. Մելիքեանից 10 ռ.։

Տիկ. Եղիսաբէթ Յարութիւնեանից, ի յիշատակ իր ամուսնու 25 ռ. հայ որբերի համար։

Մի ոմնից 25 ռ.։

Աւճալայի ջրանցքի ծառայողներից 11 ռ. 30 կ.։

Երևանի նահանգի Նախիջևանի Գրղնութ գիւղացի Թադւոսի Սաֆարեան Ներսիսեանցի թաղման առթիւ հանգուցեալի որդի Աբրահամ Ներսիսեանից, Սարգիս քահ. Աւետիքեանի միջոցով 100 ռ.։

Նոր ստացել ենք 511 ռ. 45 կ., մեզ մօտ կար 11,523 ռ. 52 կ., ընդամենը 12,034 ռ. 97 կ.։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 11 փետր.

Ալաշկերտի փախստականների վերահսկիչ պ. Աբոյեանի տւած տեղեկութիւնների համաձայն, շատ այնտեղ կը հասնին բուն Մշեցի բառ մը փախստականներ։

Այդ անսպասելի լուրը մեծ ուրախութիւն պատճառեց կորստակէզ ու ան սիրտ մշեցիներին. որովհետև աշխատանքների պատմածի համաձայն Տարօնից և իր բարձրաւանդակից մի կտոր ոսկոր տեսնալն անգամ անյուսալի էր։

Ուստի մենք, մշեցիներս, թախանձագին խնդրում ենք պ.պ. բարեկար կարգադրիչներին, որ երբ մշեցի այդ մազապուրծ բեկորները կը հասնին իրենց քով, հնար եղածին չափ թող բարի լինեն «Հորիզոն»-ի միջոցով օր առաջ յայտնել նրանց անուն-ազգանունները և որ գիւղացի ըլլալները ի գիտութիւն պանդուխտ մշեցիներիս, որպէսզի մենք էլ հնարաւորութիւն ունենանք օր առաջ հասնելու և օգնութեան ձեռք կարկառելու [illegible]։

Ի դիմաց պանդուխտ մշեցիների՝

Միսաք Առաքելեան

ՓՈՍՏԱՐԿՂ

ՍԱՐԻ (Պարսկաստան). Գէորգ Թամամեանին. —Անցեալ տարի ձեր բաժանորդագրութեան հաշւին ստացել ենք միայն 6 ռուբլի, որի դիմաց ձեզ թերթ է ուղարկւած յուլիսից մինչև տարւայ վերջը։

Խմբագիր՝ Ս. ՍԱՀԱԿԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ